թանձր սիւներով վեր էր բարձրանում եւ միախառնւում էր բարակ, թափանցիկ մառախուղի հետ: Թոնիրները վառւում էին:

Երբ մտանք տէր հօր տան բակը, նրա որդին իր նժոյգը, ախոռատնից դուրս բերելով, այնտեղ կապել էր եւ իր ձեռքով թիմարում էր: Մենք ամէնքս կանգնեցինք, նայում էինք սիրուն նժոյգի վրայ: Վարժապետը մտածեց նրա հետ մի կատակ խաղալ.

— Ի՞նչ ես այդքան փայփայում, — ասաց նրան, — մի գիշեր կը գողանան այդ ձին:

— Ո՞վ կարող է գողանալ, — ինքնահաւան կերպով պատասխանեց նա եւ շարունակեց իր գործը:

— Օրինակ, ես:

— Չես կարող:

— Կարող եմ:

Տէր հայրը պատմեց այն բոլոր զգուշութիւնները, որ որդին գիշերը գործ է դնում իր ձիու պահպանութեան համար, յիշեց եւ շղթայի մասին, թէ ինչպէս նա կապում է ոտին:

— Շղթան շատ հեշտութեամբ կարելի է կտրել, — սառնութեամբ ասաց վարժապետը, — այդ չի փրկի ձիուն:

— Հեշտութեա՞մբ, — ձայն տոեց տէր հօր որդին, սաստիկ վրդովուելով, — ապա փորձեցէ՛ք:

Վերջին խօսքերի հետ նա ներս վազեց ախոռատունը եւ, դուրս բերելով այնտեղից ծանր շղթան, ձգեց վարժապետի առջեւ: Նա ամբողջ մարմնով դողում էր բարկութիւնից: Վարժապետը արհամարհանքով ժպտում էր: Այդ աւելի սաստկացրեց նրա վրդովմունքը:

— Ո՞ր ծայրն ես կապում ձիու ոտին, — հարցրեց վարժապետը:

Նա ցոյց տոեց:

— Այդ ծայրը կապիր ձիու ոտին, ինչպէս միշտ կապում ես, իսկ միւս ծայրը՝ քո ոտին:

Նա կատարեց պատոերը:

Մենք անհամբերութեամբ նայում էինք, թէ ինչով կը վերջանայ այդ վէճը: Վարժապետը դուրս հանեց գրպանից դանակի նման մի ծալովի սղոց եւ, բռնելով շղթայի մէջտեղից, սկսեց սղոցել: Երբ շղթան կիսով չափ կտրոեցաւ, նա մնացած մասը հուպ տոեց եւ ձեռքով կոտրեց: Ամէնքը զարմացան, ոչ